

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Շք. 1 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

— Հոգեգալստեան հանդիսատր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

— Իրիճնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեացէ»ի եւ Հսկման արարողութիւններուն նախագահեց Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան:

* Կիր. 2 Յունիս.— ՀՈԳԵԳԱԼՈՒՍ (Պենտեկոստէ): Բարեկենդան Եղիական Պահոց: Օրուան հանդիսատր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Ծառէ Արքեպս. Աճէմեան: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, որ կարդաց առաջին բաժինը Ս. Յովհան Ռսկեքերեանի Հոգեգալստեան Ծառին, միւս երկուքը կարդացուելով պատարագիչ եւ Լուսարարապետ Արքագաններու կողմէ:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեանի նախագահութեամբ կատարուած «Անդաստան»էն ետք, Հոգշ. Տ. Նորհան Վարդապետի առաջնորդութեամբ Հոգշ. Վարդապետ Հայրեր մեկնեցան Սիոն լեռ: Ս. Փրկչի վանքին գաւիթը՝ հանգուցեալ պատրիարքներու դամբարաններու մօտ անոնց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքէն ետք՝ Սիոնի վերջին ընթրիքի վերնատան մէջ տեղի ունեցաւ օրուան պատշաճ հանդիսութիւն:

* Շք. 8 Յունիս.— Է. օր Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տանիքին արեւելակողմը գտնուող Ս. Հոգիի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Կիր. 9 Յունիս.— Յիշատակ Եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին

մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

— Ս. Հոփսիսմեանց նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապրանեան:

* Բշ. 10 Յունիս.— Ս. Կոսանացն Հոփսիսմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցիի աւանդատան Ս. Հոփսիսմէի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Որ. 14 Յունիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապրանեան:

* Շք. 15 Յունիս.— Ս. Գրիգորի Լուսաւորչին (Ելն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.:

* Կիր. 16 Յունիս.— Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուց Հոգշ. Տ. Բակուր Արդ. Տատուրեան: «Հայր մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական մատրանք վասն Ս. Էջմիածնի», նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապրանեանի:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արք. Պողարեան:

* Շք. 22 Յունիս.— Ս. Մեծին Ներսիսի Ռայրապետին մերոյ եւ Խաղայ եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկաւեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 23 Յունիս.— Բարեկենդան Ս. Լուսաւորչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Որ. 28 Յունիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Ըբ. 29 Յունիս.— Գիտ նշխարաց Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատուոյն մէջ, ուր, ըստ աւանդութեան, թաղուած է մասունքը Ս. Լուսաորչի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Կիր. 30 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Դշ. 3 Յուլիս.— Թարգմանչաց հանդիսատը նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Եշ. 4 Յուլիս.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց — ի բացակայութեան Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վարդապետի— Հոգշ. Տ. Հակոբեան Վրդ. Պայրամեան:

* Ըբ. 6 Յուլիս.— Ս. Տրդատայ թագ. մերոյ եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիդիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

— Նախատօնակին ի Սբ. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Կիր. 7 Յուլիս.— Գիտ Տիոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Երթողարձի թափօրներուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

* Որ. 12 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Ըբ. 13 Յուլիս.— Ս. Երկոտասան առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 14 Յուլիս.— Բարեկենդան Վարդապատի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Որ. 19 Յուլիս.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատուոյն մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

* Ըբ. 20 Յուլիս.— Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

— Աղակերպութեան հանդիսատը նախատօնակին եւ անոր լաջորդող Տեսուչեղօր գահակալութեան նուիրուած արարողութեան նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» ի ն Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արք. Պողարեան:

* Կիր. 21 Յուլիս.— ՎԱՐԴԱՎԱՌ (Այլակերպութիւն Տեսն): Օրուն հանդիսատը Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպիսկոպոս:

* Բշ. 22 Յուլիս.— Յիշատակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադիր մատուոյն մէջ պատարագեց Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Հոգշ. Տ. Հակոբեան Վրդ. Պայրամեանի:

* Որ. 26 Յուլիս.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Ըբ. 27 Յուլիս.— Ս. Թաղէնոսի առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 28 Յուլիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածած-

նայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Շք. 3 Օգտ.— Ս. Որդոց եւ թոռանց Ս. Գր. Լուսաւորչին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 4 Օգտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Զարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Բակուր Արդ. Տատուրեան:

* Շք. 11 Օգտ.— Ս. Հայրապետացն՝ Աթանաս եւ Կիրողի, եւ Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

* Կիր. 11 Օգտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Արապիով սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող երկշաբաթեայ պատարագներու շարքը յիշեալ Տաճարէն ներս:

* Շք. 17 Օգտ.— Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Կիր. 18 Օգտ.— Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Խաղողօրհնէք»ի արարողութիւն, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Սրբեւոյ. Սարսենանի:

* Որ. 23 Օգտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածնի մատուոն մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Ծանէ Սրբեպ. Աճէմեան:

* Շք. 24 Օգտ.— Տօն Ծղակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերսեմանիի Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Հոգ2. Տ. Մաշտոց Վրդ. Բարկիւռեան:

— Կէսօրէ ետք ժամը 3.30ին, Ամեն. Պատար

արք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնի Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը:

— Գիշերասկիզբին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեցէ»ի եւ Հսկման կարգեր, ու, կարճ դադարէ մը ետք, գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսապետն էր Հոգ2. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 25 Օգտ.— ՎԵՐԱՓՈՒՍՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾՄԱԾՆԻ: Առաւօտեան ժամը 9ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպ. Ապանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնի Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, եւ ապա, Սրբափայլին առջեւ կատարուած «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ եւս «Անդաստան» կատարուեցաւ, որմէ ետք պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն եւ կատարուեցաւ նախատօնակ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորար Արք. Պողարեան:

* Բ. 26 Օգտ.— Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգ2. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ նախագահութեամբ Հոգ2. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի:

* Գշ. 27 Օգտ.— Իրաւական և սովորութեան մը համաձայն, Ս. Աստուածածնի Տաճարի մեր ամէնօրեայ պատարագը տարւոյն աս օրը տեղի կ'ունենայ առաւօտեան մութ ժամերուն: Ուրիշ տարիներու նման՝ այս տարի եւս Միաբանութեան անդամներուն հետ քառական ժողովուրդ իջաւ Գերսեմանիի ձորը, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Հոգ2. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

* Շք. 31 Օգտ.— Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի

Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեռան Վրդ. Ղարիպեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԷ

* Կիր. 2 Յունիս.— Երեկոյեան, Իտալական հանրապետութեան հաստատման 28րդ տարեդարձին առիթով, Իտալական Ընդհ. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս. Սպանեան, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեանի և Տիար Կ. Հինդեանի:

— Վատիկանէն ժամանած կարտինալ Փօլ Ֆիլիպի հովանաւորութեամբ կատարուած Բերդեհէմի համալսարանի հիմնարկէքի արարողութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Բշ. 3 Յունիս.— Կարտինալ Փօլ Ֆիլիպ այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

— Երեկոյեան, Հոգեգալուտեան տօնին առիթով, Բուսերու վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, Հոգշ. Տ. Վահան Վարդապետ եւ Տիար Կ. Հինդեան:

* Կիր. 16 Յունիս.— Երեկոյեան, Իտալիկ Նախագահ Ն. Վենտ. Փրօֆ. Էֆրայիմ Քաջիքի կողմէ՝ Քնեսէթի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ Ն. Վենտ. Ռիչարտ Դիքսոնի ի պատիւ տրուած ճաշկերտքին ներկայ գտնուեցան Ամեն. Պատրիարք Ս. Հայր եւ Դիւանապետ Գերշ. Տ. Ծահէ Արքեպ. Աճեմեան:

* Դշ. 19 Յունիս.— Անգլիոյ Էլիզապէթ Բ. Թագուհիի ծննդեան տարեդարձին առթիւ, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Ծահէ Արքեպ. Աճեմեան եւ Տիար Կ. Հինդեան:

* Բշ. 8 Յուլիս.— Յրանչիականներու նոր Կիւսթոտ Հայր Մատրիլիոս Սաքի պաշտօնական իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Կիր. 14 Յուլիս.— Երեկոյեան, Յրանսա-

լի ազգային տօնին առիթով, Յրանսական Ընդհ. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի պարտէզին մէջ տարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վահան Վարդապետի եւ Տիար Կ. Հինդեանի:

* Եշ. 18 Յուլիս.— Երեկոյեան, Սպանիոյ ազգային տօնին առիթով, Սպանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարանի պարտէզին մէջ տարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վահան Վարդապետի եւ Տիար Կ. Հինդեանի:

* Կիր. 21 Յուլիս.— Երեկոյեան, Պելճիքալի ազգային տօնին առիթով, Պելճիքական Ընդհ. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վահան Վարդապետի եւ Տիար Կ. Հինդեանի:

* Դշ. 23 Յուլիս.— Ալֆորվիլի Քաղաքապետ եւ Յրանսական Խորհրդարանի անդամ Պրն. Ժոզէֆ Յրանշէպի, ընկերակցութեամբ Յրանսացի երեք երեսփոխաններու, այցելեց Պատրիարքարան:

* Դշ. 6 Օգոստ.— Պապական նոր Նուիրակ Իօնա. Ռիչիեմ Քէրի պաշտօնական իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

— Նոյն օր, Բերդեհէմի զինուորական նոր կառավարիչը այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Եշ. 15 Օգոստ.— Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երեցեան մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, առանձնելու համար հովուութիւնը Տիօրոյթի Հայ համայնքին: Իր տեղ Ասագ Թարգման ճշանակուեցաւ Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:

* Եշ. 29 Օգոստ.— Կէսօրէ առաջ, Անկիլքաններու Սէյնթ Ծօրն եկեղեցիին մէջ, Քանոն Ֆալիք Հատուտի եւ Աքէյ Աքէյի եպիսկոպոսական ձեռնադրութեան ներկայ գրտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, Ասագ Թարգման Հոգշ. Տ. Գեորգ Վարդապետ եւ Տիար Կ. Հինդեան: